ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

Դաստիարակների մասնախմբի նիստի

Նիստը կայացել 2025-2026 ուստարվա նոյեմբերի 28-ին:

Նիստին ներկա էին մասնախմբի բոլոր անդամները:

Օրակարգում՝

1. Մասնախմբի նիստի օրակարգի հաստատում (զեկուցող՝ դաստիարակչական աշխատանքների համակարգող Մ.Հարությունյան)
2. Մասնախմբի կազմի համալրում (զեկուցող՝ դաստիարակչական աշխատանքների համակարգող Մ.Հարությունյան)
3. Մասնագիտական կարողությունների շարունակական զարգացում զեկուցող՝ դաստիարակչական աշխատանքների համակարգող Մ. Հարությունյան)
4. Այլ հարցեր

Լսեցին՝

1. Մասնախմբի ղեկավար՝ Մ.Հարությունյանը ներկայացրեց նոյեմբերի 28-ի նիստի օրակարգը՝ բաղկացած 4 հարցից:

Լսեցին՝

2. Մասնախմբի ղեկավար Մ. Հարությունյանը դաստիարակներին ներկայացրեց աշխատանքի նոր ընդունված աշխատակցին՝ Միլա Խաչատրյանին, ինչպես նաև տեղեկացրեց Քնարիկ Խաչատրյանի, հետծննդաբերական արձակուրդից հետո աշխատանքի վերադարձի մասին: Նշեց, որ նոր ընդունված աշխատակցին անհրաժեշտ է մասնագիտական աջակցություն՝ աշխատանքն արդյունավետ կազմակերպելու և իրականացնելու նպատակով:

Լսեցին՝

3. Մասնախմբի ղեկավարը ամփոփեց դաստիարակների մասնակցությունը «Ապահով և անվտանգ կրթական միջավայր» թեմայով եռօրյա վերապատրաստմանը՝ այն գնահատելով արդյունավետ և նպաստավոր մասնագիտական կարողությունների զարգացման տեսանկյունից: Նշվեց, որ փորձի փոխանակման նպատակով մասնախմբի մի շարք անդամներ մասնակցել են «Ֆիզիկական (կեցվածքային) կառավարում երկրորդային բարդությունների կանխարգելման ժամանակակից մոտեցումները» թեմայով սեմինարին, որը տեղի է ունեցել «Руски дом»-ում: Բացի այդ, տեղեկացվեց, որ 2024 թվականի նոյեմբերի 26-ին դպրոցում իրականացվել է վերապատրաստում «Այլընտրանքային հաղորդակցման տեխնոլոգիաներ» թեմայով, որին մասնակցել են մասնախմբի դաստիարակները:

Լսեցին՝

4. Նիստի ընթացքում քննարկվեցին դասարանների առաջիկա ձևավորման և նախատոնական պատրաստությունների հետ կապված հարցերը: Ներկայացվեցին

իրականացվելիք աշխատանքների հիմնական ուղղությունները և մասնակիցների անելիքները՝ ըստ պատասխանատվության շրջանակների:

Որոշեցին

1. Հաստատել մասնախմբի նոյեմբերի 28-ի նիստի օրակարգը:
2. Մասնախմբի կազմում ընդգրկված նոր աշխատակցին՝ Միլա Խաչատրյանին, ինչպես նաև հետծննդաբերական արձակուրդից վերադարձած Քնարիկ Խաչատրյանին տրամադրել մասնագիտական աջակցություն՝ ապահովելով նրանց ներգրավվածությունը մասնախմբի աշխատանքներին, փորձի փոխանակումը և անհրաժեշտ խորհրդատվությունը մասնախմբի ղեկավարի և փորձառու դաստիարակների կողմից:
3. Շարունակել դաստիարակների մասնագիտական կարողությունների շարունակական զարգացմանն ուղղված աշխատանքները՝ խրախուսելով նրանց մասնակցությունը վերապատրաստումների, սեմինարների և փորձի փոխանակման միջոցառումների, ինչպես նաև ապահովել ձեռք բերված գիտելիքների կիրառումը ուսումնադաստիարակչական գործընթացում:
4. Դասարանների առաջիկա ձևավորման և նախատոնական պատրաստությունների աշխատանքներն իրականացնել ըստ ներկայացված պլանի՝ պահպանելով սահմանված ժամկետներն ու պատասխանատվության բաշխումը:

Դաստիարակչական աշխատանքների համակարգող՝ Մ. Հարությունյան

Քարտուղար՝ Ռ. Բաղալյան

02.12.2025